«Հետք»-ի՝ «Կնքահայրը. Ալեն Սիմոնյանի որդու սնանկացած քավորը 40 մլն դոլարանոց համալիրի փայատեր է» հոդվածի հիման վրա նախաձեռնված քրեական վարույթի մանրամասները

Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ առանց համալիր փորձաքննության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատման դրական եզրակացությունների, Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 27-ին, «Պալլադա Ծաղկաձոր» համալիրի ստորգետնյա հարկերը կառուցելու համար տրվել է թիվ 43 շինարարության թույլտվությունը, որով խախտվել է Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման պահանջները:

Նախաքննությամբ պարզվել է, որ 2023 թվականի փետրվարի 28-ին և 2023 թվականի հունիսի 1-ին տրվել են համապատասխանաբար՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և համալիր փորձաքննության դրական եզրակացություններ:

Բացի այդ, նախաքննությամբ պարզվել է, որ 2023 թվականի հոկտեմբերի 23-ին և 25-ին ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության մարմնի կողմից Ծաղկաձոր համայնքի ղեկավարը ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Նկատի ունենալով, որ շինարարության թույլտվությունը տալուց հետո ստացվել են փորձաքննությունների դրական եզրակացությունները՝ 2023 թվականի դեկտեմբերի 13-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Ծաղկաձորի համայնքապետ Նարեկ Հարությունյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին՝ հաշվի առնելով, որ նկարագրված գործողությունների արդյունքում տեղի չի ունեցել մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարում, իշխանության մարմինների հեղինակազրկում կամ նրանց գործունեության խաթարում:

2023 թվականի դեկտեմբերի 13-ին քննիչի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին, որը հաստատվել է հսկող դատախազի կողմից:

Միաժամանակ, հետագայում նմանատիպ գործելաոճը բացառելու նպատակով հսկող դատախազի կողմից համապատասխան միջնորդագիր է ուղարկվել Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնք: